ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի հոկտեմբերի 1-ից 2-ը Ժնև /Շվեյցարիայի Համադաշնություն/
գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Մանե Թանդիլյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ժնև, Շվեյցարիայի Համադաշնություն, 2018 թվականի հոկտեմբերի 1-ից 2-ը

4. **Հրավիրող կողմը.**
   ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ

5. **Գործուղման նպատակը** */աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/.*
   Մասնակցություն «Ընտրության խթանում. բնակչության դինամիկան և կայուն զարգացումը» խորագրով բարձր մակարդակի տարածաշրջանային համաժողովին: Համաժողովի նպատակն էր գնահատել Բնակչության և Զարգացման միջազգային համաժողովի գործողությունների ծրագրի իրականացման ընթացքը, քննարկել անդամ պետությունների կողմից արձանագրած ձեռքբերումները, վեր հանել առկա մարտահրավերները և նախանշել հետագա անելիքները:

6. **Քննարկված թեմաները.**
   Համաժողովի ընթացքում քննարկվել են բնակչության դինամիկայի և կայուն զարգացման, ընտանիքների, ողջ կյանքի ընթացքում սեռական և վերարտադրողական առողջության, անհավասարությունների, սոցիալական ներառման և իրավունքների հետ կապված հարցերը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Հանդիպել եմ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի գործադիր տնօրենի տեղակալ Դերեժե Վորդոֆայի հետ: Քննարկումների ընթացքում ՄԱԲՀ ներկայացուցիչը պատրաստակամություն հայտնեց աջակցելու Հայաստանի Հանրապետությանը՝ ժողովրդագրության իրավիճակի բարելավման ուղղությամբ վարվող քաղաքականության իրականացմանը: Քննարկվեց նաև միջազգային փորձագետ պրոֆ. Ան Գաութիերի Հայաստան հնարավոր այցը կազմակերպելու հարցը:

Նշվեց նաև, որ հաջորդ տարի ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը կունենա երկրի ծրագրի նոր փաստաթուղթ, որը կմշակվի ՀՀ կառավարության հետ համատեղ և մոտակա ամիսների ընթացքում արդեն կսկսվեն նախապատրաստական աշխատանքները:

Քննարկվեցին նաև գենդերային հավասարությանն առնչվող հարցեր: ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը պատրաստակամություն հայտնեց շարունակել աջակցություն ցուցաբերել այս ոլորտում քաղաքականության մշակման և իրականացման գործընթացին:

Համաժողովի ընթացքում հանդիպումներ եմ ունեցել նաև Բելառուսի Հանրապետության, Մոլդովայի Հանրապետության Սերբիայի Հանրապետության սոցիալական պաշտպանության ոլորտի պատասխանատու նախարարների հետ:

Համաժողովի ընթացքում հանդես եմ եկել ելույթով՝ ներկայացնելով Բնակչության և Զարգացման միջազգային համաժողովի գործողությունների ծրագրի իրականացման ուղղությամբ ՀՀ կառավարության կողմից ձեռնարկված քայլերը և ընթացիկ բարեփոխումները (ելույթը կցվում է):

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Համաժողովի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

Քննարկումների արդյունքում վեր են հանվել Բնակչության և Զարգացման միջազգային համաժողովի գործողությունների ծրագրի իրականացման ընթացքի հետ կապված խնդիրները, դրանց լուծմանն ուղղված հետագա անելիքները, կազմվել է համաժողովի վերաբերյալ հաշվետվության նախագիծը և անդամ պետությունները վերահաստատել են իրենց հանձնառությունը՝ շարունակելու գործողությունների ծրագրի արդյունավետ իրականացումը երկրների մակարդակում:

Համաժողովի նյութերը հասանելի են հետևյալ կայքում՝ http://www.unece.org/pau/icpd25.html:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Բնակչության և Զարգացման միջազգային համաժողովի գործողությունների ծրագրի արդյունավետ իրականացման շրջանակներում հատկապես կարևորվում է ժողովրդագրական քաղաքականության առաջնահերթությունների սահմանումը, համապարփակ ժողովրդագրական քաղաքականության մշակումն ու իրականացումը: Այս ուղղությամբ ներկայումս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը գործընկեր կազմակերպությունների հետ իրականացնում է քննարկումներ՝ ներգրավելով միջազգային կառույցների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին և անկախ փորձագետներին:
Մյուս կարևորագույն ուղղություններից մեկը տարեցների հիմնահարցերի ոլորտի բարեփոխումներն են: Այս ուղղությամբ կարևորվում է ոլորտի ռազմավարական փաստաթղթերի արդյունավետ իրականացումը, ինչպես նաև ներկայումս գործող միջգերատեսչական հանձնաժողովի և տարեցների հիմանահարցերի ցանցի աշխատանքների առավել ակտիվ գործունեության ապահովումը: Այս ուղությամբ ևս նախարարությունն իրականացնում է համապատասխան աշխատանքներ:
Համապարփակ աշխատանքներ են իրականացվում նաև զբաղվածության ոլորտում վարվող քաղաքականության արդյունավետության բարձրացման, ինչպես նաև ընտանեկան բռնության կանխարգելման ուղղություններով:
Համաժողովն արդյունավետ հարթակ էր վերոնշյալ հարցերի հետ կապված միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման առումով:
Միաժամանակ, նախարարությունը կշարունակի ակտիվորեն համագործակցել ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետ՝ համաժողովի ընթացքում կայացած հանդիպումների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածություններն իրականացնելու նպատակով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

08.10.2018